

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/6

24 հունիսի 2014 թ.

Քննարկվեց «Փայտե տուն» ՍՊԸ 31.05.2014 թ-ի և 24.06.2014 թ-ի գրություններով բերված պահանջը 01.07.2013 թ-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ:

«Փայտե տուն» ՍՊԸ գրություններում բերված փաստարկները.

«Փայտե տուն» ՍՊ ընկերությունը 2013 թվականին հանդիսացել է շրջանառության հարկ վճարող, սակայն երբ շահել է Պաշտպանության Նախարարության կողմից հայտարարված մրցույթը և կնքել պայմանագիր, որի արժեքը կազմում է 66 միլիոն դրամ, գերազանցելով 58350 միլիոնի շեմը ներկայացրել է ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ դիմում: Սակայն, թյուրիմացաբար ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության փոխարեն 2013 թվականի հուլիս ամսին ներկայացվել է ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև ՀՀ վարչապետի մոտ 03.02.2014 թ-ին կայացած ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստի թիվ 23.6/186712-14 արձանագրության 4-րդ կետը, ընկերությունը խնդրում է 01.07.2013 թ-ից իրեն համարել ավելացված արժեքի հարկ վճարող:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովը բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմինն վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը ներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է

